«վասն», «պատմութիւն» սկսվածքային միավորները զրույցի ժանրի վերնագրային պոետիկային են բնորոշ: Բացի այդ, զրույցի տեքստային ***«ասէն, թէ»***, ***«պատմէն, թէ»*** և նմանատիպ այլ մուտքային միավորներն ամենահաճախադեպ երևումներն ունեն Դավրիժեցու պատմագրքում: Այդ ամենի համադրությամբ՝ ձևավորվում է մի ընդարձակ զրույց՝ ներքին տարաբնույթ դիպաշարային զարգացումներով:

«Միջնադարյան զրույցներին առհասարակ բնորոշ է հետևյալ կառուցվածքը, թեև ոչ միշտ ամբողջությամբ պարտադիր,– գրում է ժանրի ուսումնասիրողներից Արմենուհի Սրապյանը,– մուտք, բուն պատմություն և վերջաբան կամ եզրահանգում»[14]: Դավրիժեցու պատմագրքում զրույցի ժանրային դրսևորումները հիմնականում ենթարկվում են կառուցվածքային այդ օրինաչափությանը: Բնականաբար, այդ ընդհանրականության մեջ Դավրիժեցին հանդես է բերում անհատականության, ինքնատիպության տարրեր, ընդունված օրինաչափություններից շեղվելու միտումներ: Պետք է նշել, սակայն, որ դրանք արտահայտվում են ոչ այնքան բովանդակային, որքան կառուցվածքային հատույթում: «Սյուժեները, թեմաները, մոտիվները միջնադարում մեծամասամբ ավանդական են,– այս առումով նկատում է միջնադարյան գրականության գիտակ Դմիտրի Լիխաչովը: – Կարևորն այն է, թե ոճական ինչ կապով է այս կամ այն սյուժեն, թեման կամ մոտիվը հայտնվում գրականության և մատենագրության մեջ»[15]: Դավրիժեցու պարագային դա ներկայանում է պատմական հավաստի փաստի ու տեղեկության վկայագրման համատեքստում՝ կրելով համապատասխան ոճական ազդեցություն: Այս դեպքում՝ զրույցը Դավրիժեցու համար նախևառաջ ունի պատմափաստի նշանակություն: Այսինքն՝ պատմական տեղեկությունը նրա պատմագրքում երբեմն ներկայանում

---

[14] ***Արմենուհի Սրապյան,*** Հայ միջնադարյան զրույցներ, Երևան, 1969, էջ 25:

[15] ***Д. С. Лихачев,*** Поэтика древнерусской литературы, Москва, 1979, ст. 29.